9436

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 171 - 24

Նախաձեռնող՝ ***«ՌԵՆԴԵՐՖՈՐԵՍԹ» ՍՊԸ***
Երևան, Պ. Սևակի 11/1

Գործունեությունը՝ ***«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառապարկում արդի լուծումներով հանրային այգու հիմնում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ *7 թերթ*

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 171-24

«27» 08 2024թ.

Կոտայքի մարզի Ջրվեժ բնակավայրի «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառպարկում հանրային այգու հիմնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՌԵՆԴԵՐՖՈՐԵՍԹ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայր

Ներածական մաս. «ՌԵՆԴԵՐՖՈՐԵՍԹ» ՍՊ ընկերությունը Կոտայքի մարզի Ջրվեժ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում նախատեսում է իրականացնել հանրային այգու հիմնման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում :

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել «ՌԵՆԴԵՐՖՈՐԵՍԹ» ՍՊ ընկերության և Շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված համագործակցության հուշագիրը և Ջրվեժ համայնքի կողմից 11.07.2024թ տրված N 140 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նկարագրական մաս. Այգու հիմնման համար նախատեսված տարածքը գտնվում է Կոտայքի մարզի հարավ արևելյան հատվածում, Ջրվեժ բնակավայրի վարչական տարածքում, Երևան Գառնի մայրուղու աջակողմյան հատվածում՝ ծովի մակերևույթից 1400-1500 մ միջին բարձրությունների վրա: Այգու համար նախատեսված հողատարածքում գերակշռում են տարբեր հզորություն ունեցող կավային հողերը: Տեղանքը կիսավայրի անտառպարկ է, որը բաղկացած է հիմնականում փշատերև ծառերից և թփերից, հանդիպում են նաև գերաճած խիտ տարածքներ, և սիզամարգեր: Տարածքի տեղադիրքին համապատասխան նախագծված ճարտարապետական լուծումները հնարավորություն կստեղծեն այցելուներին իրենց հանգիստը կազմակերպել այգու տարածքում:

Հանրային այգու համար նախատեսված տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնապահպանական:

Նախաձեռնող ընկերության կողմից՝ գործունեության ենթակա տարածքներում նախատեսվում են իրականացնել մաքրման, հարթեցման աշխատանքներ, ինչի համար անհրաժեշտության դեպքում կատարվելու են գրունտի (ոչ ավել քան 80 մ^3) լցոնման աշխատանքներ՝ (բարձված քաշը 13տ) բեռնատար ինքնաթափով, որի երթևեկությունը սահմանափակվելու է կայանատեղի համար հատկացված տարածքով: Ստացված շերտը նախատեսվում է ձեռքի գործիքով տոփանել և լցոնել մանրախճով (ընդհանուր ծավալը՝ 2000 մ^3): Մանրախճի շերտը տոփանվելու է և վրայից մոնտաժվելու է թեթև պլաստիկ հատակով՝ ճեմուղիների համար, որն էլ լցոնվելու է մանրախճով:

Նախատեսվող գործունեության իրականացումը ենթադրում է հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

- չափագրում և հարթեցում,
- տարածքում մոնտաժային աշխատանքների նախապատրաստում,
- հավաքովի կոնստրուկցիաների տեղադրում
- տարածքի ուղղեցույցների կազմակերպում,
- մեքենաների կայանատեղերի կազմակերպում,
- տարածքի ընդհանուր բարեկարգում:

Հողային աշխատանքներն իրականացվելու են միայն նախագծով սահմանված ավտոկայանատեղի և ճեմուղիների տարածքում՝ JSB 1CX ամբարձիչով, որը տեղաշարժվելու է միայն կայանատեղի և ճեմուղիների համար նախատեսված տարածքում: Ամբարձիչը կայանվելու է խճով լցոնված տարածքում՝ հնարավոր արտահոսքերն արագ նկատելու և վերացնելու համար: Հիմքերի համար կատարվելու են հորատումներ ձեռքի էլեկտրական հորատման գործիքով: Նախատեսվում է շինարարական հրապարակն ամբողջությամբ պատնեշել գործող ավտոճանապարհից մետաղական թիթեղներով, որոնք ճանապարհի հատվածից կրում են կառուցվող պարկի էսքիզային նկարները: Շինհրապարակում ժամանակավորապես տեղադրվելու է շարժական տնակ-գրասենյակ 6մ*3մ*2.5մ չափսերով:

Շինարարության տևողությունը նախատեսվում է 12 ամիս:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5,48905 հա, որից կառուցապատվելու է 50%: Շինարարական աշխատանքները կրելու են կարճաժամկետ բնույթ: Գործունեության իրականացման ընթացքում չեն կատարվելու հիմնական կառուցապատման, ինչպես նաև հողային և բետոնային աշխատանքներ: Տեղադրվող կառույցները լինելու են մետաղյա և փայտյա կոնստրուկցիաներով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն այնպիսին, որպեսզի չխաթարվի տարածքի բացառիկ մոդելը և շրջակա միջավայրը: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ուստի գործունեության իրականացման հետևանքով հնարավոր ազդեցությունները կլինեն նվազագույն:

Հանրային այգու կազմակերպումը ենթադրում է հետևյալ հարթակների հիմնումը.

Դիտահարթակ՝ ընդհանուր չափերը կազմում են 10,2x11.8 մետր: Այն միանում է հետիոտն ճանապարհների հետ մետաղական հարթակով, որը դիտահարթակի հետ նույն նիշի վրա է, սահմանափակ շարժունակություն ունեցող մարդկանց համար ավելի հարմար լինելու համար: Մետաղական հարթակի ընդհանուր երկարությունը կազմում է 3 մ, իսկ լայնությունը՝ 1,2 մ: Հողից ամենաբարձր նիշը կազմում է 1,5մ , իսկ ամենացածրը՝ 1,2 մ: Դիտահարթակի հատակի երեսպատումը նախատեսվում է փայտից, մեջտեղի հատվածում նախատեսվում է բացվածք

գոյություն ունեցող ծառերի պահպանության համար: Բացվածքին կից կտեղադրվեն փայտե նստարաններ, որոնք նախատեսված են 6 հոգու համար: Հարթակի ամբողջ պարագծով տեղադրվելու է մետաղական բազրիք: Հողի նիշ իջնելու համար իրականացված է մետաղական աստիճանավանդակ, որը միանում է սալահատակներին, որոնք տանում են դեպի հետիոտն ճանապարհներ: Հարթակի կրող կոնստրուկցիաները իրականացվելու են մետաղական կարկասից:

Յոգայի համար նախատեսված տարածք՝ նախատեսվում է սոճու տախտակներից, որտեղ միաժամանակ կարող են գտնվել մի քանի մարդ: Օբյեկտի կրող կառուցվածքը մետաղյա շրջանակ է, իսկ հատակի ծածկույթի փայտյա երեսպատման ներսում նախատեսված է անցք՝ փայտի համար: Ծառերի պահպանման համար նախատեսված անցքերի բոլոր ճշգրտումները կատարվում են նախագծի ճարտարապետների հետ խորհրդակցելով:

Դիտահարթակ-աշտարակ՝ գտնվում է ոչ խիտ ծառերով պատված հատվածում, որի թեքությունը կազմում է 0,3 մ: Կառույցի ընդհանուր բարձրությունը կազմում է 7,4 մ, իսկ վերին հատվածի տրամագիծը կազմում է 2 մետր: Կառույցը բաղկացած է 2 մասից՝ վերևի հատվածը փայտե գլան է մետաղական կարկասով, որը հենվում է 2x2 մետր չափերով հարթակի վրա: Կառույցի կենտրոնում գտնվում է պտուտակաձև սանդուղքը, որը կապում է միմյանց դիտահարթակի 2 հարթակները:

Պերգոլա՝ նախագիծն իրականացված է մետաղյա կարկասից՝ հիմքում բաղկացած լինելով հավասարակողմ եռանկյունուց, որի յուրաքանչյուր կողմը 5 մ է: Մետաղյա կարկասը իր վրա կրում է դեկորատիվ փայտյա ցանց, որն էլ հանդիսանում է պերգոլա: Կարկասի եզրագիծը դեֆորմացված է: Փայտյա ցանցը մետաղական ամրակով միացված է հիմնակմախքին:

Համաձայն նախագծային լուծումների հետիոտնային ճանապարհի ընդհանուր երկարությունը 334 մ է: Ճեմուղիների մի մասը իրականացվելու է խոշոր քարերով, որոնք տեղադրվելու են հողի մեջ՝ հարմարեցնելով հանգստացողների քայլելուն: Մնացած մասը նախատեսվում է իրականացնել թեթև մետաղական ցանցապատ կոնստրուկցիայով, որոնք ամրանալու են հողի մեջ՝ ապահովելով անանցանելի վայրերով տեղաշարժ:

Կառուցապատման բոլոր կոնստրուկցիաները լինելու են հավաքովի, մետաղական և մշակված փայտից, որոնք տեղադրվելու են տարածքում ցցային հիմքով՝ մետաղական սյուների վրա, առանց բետոնապատման աշխատանքների:

Տարածք մոտեցող ճանապարհը ասֆալտապատված է, ավտոկայանատեղին նախատեսվում է իրականացնել գեոտեքստիլից, որի մակերեսը կազմում է 4735 մ^2, այն կապահովի լրացուցիչ կանաչ տարածք, կմիաձուլվի այգու ընդհանուր տեսքին: Ավտոկայանատեղին նախատեսվում է 197 մեքենայի համար, իսկ դրա հարակից հատվածները լինելու են գազոնապատ:

Նախագծի համաձայն՝ ավտոկայանատեղիի և ճեմուղիների համար նախատեսված տարածքից 3-4 հատ եղևնազգի ծառատեսակները վերատնկվելու են նախորոք մշակված տարածքում «Ջրվեժ» անտառապարկի վերահսկողության ներքո:

Այգու լուսավորությունը իրականացվելու է 3 տեսակի՝ գծային, գետնի վրա՝ լուսարձակող և սյունաձև:

Շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են ջուր՝ աշխատողների խմելու ջրի և կենցաղային կարիքների համար, որը

բերվելու է 22երով՝ ըստ պահանջի, իսկ տեխնիկական նպատակով ջուրը կբերվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքով, կլցվի տարածքում նախատեսվող 3 մ³ տարողությամբ պլաստիկ բաքի մեջ:

Տարածքի հրդեհաշիջման նպատակների համար կտեղադրվեն կրակմարիչներ:

Շինարարության փուլում առաջանալու են կենցաղային կոյուղաջրեր, որոնք ինքնահոս համակարգով հեռացվելու են դեպի 90*90 չափերի 1 շարժական բիոզուգարան: Բիոզուգարանը տեղադրվելու է վարձակալության սկզբունքով, մաքրումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից՝ պայմանագրային հիմքունքներով, իսկ աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Այգու տարածքում տեղադրվելու է նաև 20 հատ աղբաման:

Այգու հիմնման ընթացքում հողային աշխատանքների իրականացումը կապված է հիմնականում ցցերի տեղադրման հետ, ինչն իրենից ենթադրում է մոտ 360 մ³ ծավալի հողային աշխատանք: Հողային զանգվածի կուտակում չի նախատեսվում, քանի որ յուրաքանչյուր ցցի տեղադրումից հետո կատարվելու է հանված հողի հետ լիցք և ամրացման նպատակով տոփանման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բոլոր կառույցների կոնստրուկտիվ լուծումները լինելու են թեթև շարժական հավաքվող կոնստրուկցիաներից, որոնք բերվելու և հավաքվելու են տեղում, ինչի արդյունքում առաջանելու են մետաղական և փայտե մնացորդներ: Առաջանալու են մոտ 2մ³ ծավալով փայտի թափոններ և 3մ³ ծավալով մետաղական մնացորդներ, որոնք պահվելու են տարածքում՝ պարկերի մեջ և նախատեսվում են օգտագործել սեփական կարիքների համար:

Առաջացած կենցաղային աղբը Ջրվեժի համայնքապետարանի հետ նախապես համաձայնեցված, պայմանագրային հիմունքով կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ժամանակ աշխատելու են 18 մարդ՝ մասնագետներ, որից 3-ը՝ ԻՏԱ, 15 բանվոր: Աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր շարժական տնակ՝ աշխատողների կենցաղ-սանիտարական պայմաններն ապահովելու, ինչպես նաև հանգստի կազմակերպման համար:

Նախատեսված է շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազանի ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազեր հնարավոր արտանետումները կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

-բացառել տարածքում թափոնների այրումը,

հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է

-շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումն իրականացնել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

-գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահեստավորումը բացառել:

Գործունեության իրականացման տարածում կենսաբազմազանության պահպանության նպատակով նախատեսվում է.

-ընկերության կողմից մշակել գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

-հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ տեղեկացնել «Ջրվեժ» անտառպարկին, նախորոք առանձնացնելով հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:

Աղմուկի մակարդակի հնարավոր գերազանցումները կանխելու նպատակով նախատեսվում է

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

-շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

-տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

-պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները,

-բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

-օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

-պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

-շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է.

-աշխատողներն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, ակնոց և այլն),

-աշխատողներին հատկացնել է ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի համար,

-վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը,

-մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և արտակարգ իրավիճակների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Զբոսայգու կառուցման շինարարության ժամանակ բացվելու են նոր աշխատատեղեր: Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում կզարգանա զբոսաշրջիկների շարժը դեպի այգի: Այգու մուտքը լինելու է անվճար, իսկ նախատեսվող ավտոկայանատեղին՝ վճարովի և քանի որ շինաշխատանքների անմիջապես ավարտից հետո տարածքը հանձնվելու է «Ջրվեժ» անտառպարկին, ապա ավտոկայանատեղիի գումարը տնօրինելու է անտառպարկը՝ այգու բարեկարգման նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու են.

- գործունեության ենթակա տարածքի հարթեցում, բարեկարգում,
- շինարարական սարքավորումները հեռացվելու են տարածքից,
- տարածքը մաքրվելու է, վերականգնվելու է լանդշաֆտը:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Կոտայքի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման ժամանակ:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով սահմանված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի ապահովմանը:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Գործունեության և հարակից տարածքներում Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմնին:
5. Գործունեության իրականացման ընթացքում բացառել ծառահատումները, իսկ նախատեսված ծառերի տեղափոխումն իրականացնել «Ջրվեժ» անտառպարկի հետ համաձայնեցված:
6. Նախատեսվող գործունեությունը և հանրային այգու հետագա շահագործումն իրականացնել «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրության դրույթների համաձայն :

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՌԵՆԴԵՐՖՈՐԵՍԹ» ՍՊԸ-ի կողմից Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառպարկում հանրային այգու հիմնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աննա Սարգսյան